

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**



ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Արժեքահամակարգերի ձևավորումը ֆիզիկայի դասերին

Կատարող՝ Անահիտ Բազիկյան

Ղեկավար՝ Կարինե Սամվելյան

ԵՐԵՎԱՆ 2022

Բովանդակություն

Ներածություն-----
-----3

Հիմնական բովանդակությունը *Արժեհամակարգերի ձևավորումը ֆիզիկայի
դասին*----- 4-11

Եզրակացություն -----
----- 12

Օգտագործված գրականության ցանկ-----
-----13

Ներածություն

Ֆիզիկայի ուսուցչի առաջ կանգնած է առարկայի ուսումնական ընթացքում դասընթացի նյութերի օգնությամբ արժեքային համակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության խիստ բարդ խնդիրը: Ուստի կարևոր էմ համարում այդ թվում և այս առարկայի ուսուցչի ջանքերը սովորողների մոտ արժեքային համակարգ ձևավերելու ճանապարհին:

Ֆիզիկայի դասերին դաստիարակության խնդիրը պետք է հիմնված լինի մարդկային գործոնի գաղափարի օգտագործման վրա` որպես գիտության գործառույթյան որոշիչ սկիզբ: Ուսուցչի ակտիվ կենսական դիրքորոշումը, նրա գիտելիքների ու հետաքրքրությունների պաշարը կապահովեն սովորողի արժեհամակարգի ձևավորումը:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեքային համակարգի ձևավորումն անհնար է պատկերացնել հասարակությունից, մարդկանց հետ շփումից գատ: Անձի արժեքների համակարգը ձևավորվում է սոցիալականացման ընթացքում: Արժեքային համակարգի ձևավորումն ընթանում է դաստիարակության և կրթության ընթացքում սոցիալական փորձի յուրացման միջոցով: Անձնային արժեքները ձևավորվում են սոցիալականացման ամբողջ ընթացքում: Կարող ենք վստահաբար պնդել, որ սովորողի արժեհամակարգի հիմնական մասի ձևավորման համար պատասխանատու է դպրոցական միջավայրը, քանի որ այստեղ է տեղի ունենում նաև սովորողի իմացական առաջընթացն ու կարողունակությունների զարգացումը, իսկ դրանք մեծապես կապված են արժեքային համակարգի հետ և փոխլրացնում են միմյանց: Ուսուցչի դաստիարակչական աշխատանքի ընթացքում զարգանում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստակամությունը դժվարությունները հաղթահարելու գործում ձևավորում են համառություն , ինսանակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Այսպիսով, կարող ենք պնդել մեր այն համոզմունքը, որ սովորողի արժեքային համակարգի հիմնասյուները դրվում են դպրոցում: Դասապրոցեսը, սովորողների միջանձնային շփումները, լայն շրջանակների հետ համագործակցությունը իրենց ազդեցությունն են թողնում սովորողի հետաքրքրությունների շրջանակի, դիրքորոշումների, համոզմունքների վրա, ուստի այս տեսանկյունից կարևոր է ուսուցչի ուղղորդումը, լավի ու վատի պատկերավոր ցուցադրումը դասի բովանդակային կառուցվածքի մեջ: Այս առումով կարևոր ենք համարում նաև ուսուցիչ-ծնող հարաբերությունների բարձր մակարդակը, որը նույնպես թույլ կտա գերծ պահել սովորողներին խնդրահարույց ու բացասական իրողություններից և վերջինիս արժեհամակարգի ձևավորումը դնել ճիշտ ուղենիշի վրա:

Ֆիզիկայի դասերին դաստիարակության խնդիրը պետք է հիմնված լինի մարդկային գործոնի գաղափարի օգտագործման վրա՝ որպես գիտության գործառույթյան որոշիչ սկիզբ: Ուսուցչի ակտիվ կենսական դիրքորոշումը, նրա գիտելիքների ու հետաքրքրությունների պաշարը կապահովեն սովորողի արժեհամակարգի ձևավորումը: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ

առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում:

Ֆիզիկայի ուսուցչի առաջ կանգնած է առարկայի ուսումնական ընթացքում դասընթացի նյութերի օգնությամբ արժեքային համակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության խիստ բարդ խնդիրը: Ուստի կարևոր են համարում՝ այդ թվում և այս առարկայի ուսուցչի ջանքերը սովորողների մոտ արժեքային համակարգ ձևավորելու ճանապարհին:

Ֆիզիկայի քիմիայի դասերին գիտնականների ու մտածողների կյանքն է օրինակ բերվում, ինչը նաև մոտիվացնող է:

Ուսուցչի դաստիարակչական աշխատանքի ընթացքում զարգանում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստակամությունը դժվարությունները հաղթահարելու գործում ձևավորում են համառություն , ինստակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ:

Ֆիզիկայի դասերին դաստիարակության խնդիրը պետք է հիմնված լինի մարդկային գործոնի գաղափարի օգտագործման վրա՝ որպես գիտության գործառույթյան որոշիչ սկիզբ: Ուսուցչի ակտիվ կենսական դիրքորոշումը, նրա գիտելիքների ու հետաքրքրությունների պաշարը կապահովեն սովորողի արժեհամակարգի ձևավորումը:

Ջետազոտական աշխատանքի նպատակն է ցույց տալ ֆիզիկա առարկայի դերը սովորողի կյանքում, ընդգծել դրա օգնությամբ սովորողներին ճիշտ ուղղորդելու և արժեքային համակարգ ձևավորելու անհրաժեշտությունը:

Ջետազոտական աշխատանքի խնդիրն է ուսումնասիրել այն եղանակներն ու միջոցները, որոնք թույլ կտան ուսուցչին ֆիզիկայի դասավանդման ընթացքում առաջնահերթություն դարձնել նաև վերջիններիս արժեհամակարգի ձևավորումը:

Ջիմնարար ֆիզիկական տեսությունների եւ գիտափորձերի, հետազոտության մեթոդների ուսումնասիրության հիման վրա սովորողների մեջ պետք է՝

. ձեւավորել պատկերացումներ անձի բարոյական հիմքերի առաջնահերթության մասին,

- . զարգացնել հուզական- արժեքային մտածողություն,
- . զարգացնել քննախույզ մտածողություն,
- . դաստիարակել քաղաքացի, հումանիստ եւ խաղաղության պայքարի մարտիկ:
- . դրվի սովորողների ռազմահայրենասիրական, գեղագիտական, հոգևոր դաստիարակության հիմքերը:

Ֆիզիկայի դասերին պետք է ձեւավորել գիտական աշխարհայացք և ստեղծագործական մտածողություն:

Այսպիսով, ֆիզիկայի դասերին դաստիարակության խնդիրը պետք է հիմնված լինի մարդկային գործոնի գաղափարի օգտագործման վրա՝ որպես գիտության գործառույթյան որոշիչ սկիզբ: Ուսուցչի ակտիվ կենսական դիրքորոշումը, նրա գիտելիքների ու հետաքրքրությունների լայնույթը, խոր համոզմունքով եւ հուզականորեն հագեցած ուսումնական նյութի շարադրման բարձր մակարդակը

շատ առումներով կապահովեն ֆիզիկայի ուսուցչի դաստիարակչական աշխատանքի հաջողությունը:

Արտադասարանական միջոցառումները հնարավորություն են տալիս սովորողների ստացած գիտելիքներն ու հմտությունները օգտագործել:

Որպես անձի դաստիարակության միջոց սովորողներին ծանոթացնել ֆիզիկոսների հայտնագործություններին ու կենսագրությանը:

Կենսագրական նյութը պետք է կապված լինի կոնկրետ նյութի հետ, ներառվի ընթացիկ

նյութի շարադրման տրամաբանության մեջ: Անհրաժեշտ է սովորողների գիտակցությանն հասցնել այն, թե կոնկրետ ինչ է արել այս կամ այն գիտնականը, ինչպես


են նրա հայտնագործությունները կամ գյուտերը ծառայում մարդկության բարոյությանը:

Կենսագրական նյութը պետք է խթանի ուսումնական բարդ նյութի յուրացումը: Այս դեպքում նոր նյութի մատուցումը պետք է սկսվի գիտնականի գյուտարարական տաղանդը, նպատակին հասնելու նրա աշխատասիրությունն ու համառությունը ցույց

տվող անջնջելի, հուզականորեն հագեցած օրինակով: Կարելի է սովորողներին ծանոթացնել գիտնականի մտածողության ոճին, աշխատանքի արդյունքները մարդկանց պրակտիկ կարիքներին ծառայեցնելու նրանց ձգտմանը, նրանց բարձր քաղաքացիականությանը:

Ներկայացնելով մի քանի ֆիզիկոսի կենսագրություն ` ակնկալում եմ դրա միջոցով սովորողների մեջ ձևավորել մի քանի կարևոր արժեքներ:

Մայքլ Ֆարադեյ




Անգլիացի ֆիզիկոս Մայքլ Ֆարադեյը , ուսումնասիրելով դանիացի գիտնական Ջանս Բրիստիան Էրստեդի փորձը, որում ապացուցվել էր , որ էլեկտրական հոսանքն օժտված է մագնիսական հատկություններով, փորձեց ուսումնասիրել հակառակ երևույթը: 1822 թ

Ֆարադեյն իր առաջ դրեց խնդիր. կարելի՞ է արդյոք մագնիսական դաշտի օգնությամբ ստանալ էլեկտրական հոսանք: Շուրջ 10 տարվա համառ հետազոտական աշխատանքը տվեց իր արդյունքները : Նա կարողացավ մագնիսի և կոճի միջոցով ստանալ փոփոխական էլեկտրական հոսանք: Այդ երևույթը կոչվեց էլեկտրամագնիսական մակաձում, իսկ առաջացած հոսանքը՝ մակաձման հոսանք: Ջոսանքի հզոր աղբյուրների՝ գեներատորների աշխատանքի հիմքում ընկած է Ֆարադեյի էլեկտրամագնիսական մակաձման երևույթը: Ֆարադեյի կատարած փորձի արդյունքները հետագայում ոչ միայն նպաստեցին էլեկտրամագնիսական դաշտի տեսության կայացմանը, այլև ունեցել են գործնական լայն կիրառություններ՝ հատկապես էլեկրտաէներգիայի արտադրության ոլորտում: Ֆարադեյի փորձն ապացուցում է, որ աշխատասիությունն ու համառությունը բերում են ցանկալի արդյունքի և եթե Ֆարադեյը չունենար այդչափ համառություն և աշխատասիրություն, մի քանի անհաջող փորձերից հետո կդադարեր պայքարել ցանկալի արդյունքի համար և միգուցե երբեք էլ էլեկտրակայանի կառուցման հիմքը չդրվեր:

Ֆարադեյն իր օրինակով սովորողները պետք է ձգտեն դառնալ համառ և աշխատասեր:

Թոմաս Էդիսոն



10 տարեկանից նա արդեն տնային լաբորատորիայում ինքնուրույն փորձեր էր կատարում: Բեռնատար վագոնում նա լաբորատորիա սարքավորեց և սկսեց փորձեր անել: Շուտով Էդիսոնն ստեղծեց Կոնգրեսի քվեների ինքնաշխատ հաշվիչ, որը սակայն ոչ ոքի չհետաքրքրեց: Երկրորդ գյուտը սակարանում բաժնետոմսերի տատանվող կուրսը հեռավորության վրա հաղորդելու հեռագրական ապարատն էր՝ (հեռագրական ինքնապատասխանիչ):

1869 թվականին իր հեռագրության գյուտի համար ստացավ դրամական խոշոր պարգև: Այդ գումարով նա սարքավորեց հետազոտական լաբորատորիա, որն ինքն անվանում էր «գյուտերի ֆաբրիկա»: Նա սիրում էր կրկնել, որ իր լաբորատորիայից յուրաքանչյուր 10 օրը մեկ դուրս է գալիս ոչ մեծ մի գյուտ, իսկ յուրաքանչյուր 6 ամիսը մեկ՝ խոշոր գյուտ:

Թոմաս Էդիսոնի ամենահայտնի գյուտերից մեկը դարձավ աշխարհում առաջին՝ ձայնի գրանցման և վերարտադրման սարքը՝ ձայնագրիչը (ֆոնոգրաֆ), որը նա ստեղծեց 1877: Նրա այդ գյուտին է պարտական հետագա ողջ տեսաբանությունը, որն ընդգրկում է սկավառակային ձայնա-տեսագրությունը, կինոն և հեռուստատեսությունը:


Էդիսոնը մեծ եռանդով զբաղվում էր էլեկտրական լամպի կատարելագործմամբ: Նա ստեղծեց արտամղած օդով անոթում զոդված շիկացման թելիկով լամպ, որը ժամանակակից լամպի նախատիպն է: Դրան հաջորդեց հսկայական հեղափոխությունը, երբ նա գտավ, որ լամպի թելիկի համար ամենահարմար նյութը վոլֆրամն է:

1882 թ. Էդիսոնը կառուցեց աշխարհում առաջին ջերմաէլեկտրակայանը: Նա մշակեց մի շարք տարբեր փոխանցման և չափիչ սարքերի սխեմաներ, նախագծեց հզոր գեներատորներ:

Առաջին գործող հեռախոսափողն Էդիսոնն ստեղծել է «Ուեսթերն Յունիոն» ընկերության պատվերով: Ձայնի ուժեղացման համար նա հեռախոսի մեջ տեղադրեց ինդուկցիոն կոճ: Իր այդ գյուտի համար ընկերությունն Էդիսոնին վճարեց 100 հազար դոլլար: Նա բազմաթիվ գյուտեր է կատարել նաև


կինոտեխնիկայի, քիմիայի, ռազմական տեխնիկայի և այլ բնագավառներում: Յենց
Էդիսոնն է առաջարկել հեռախոսային խոսակցությունը սկսել «Ալո» խոսքով:
Թոմաս Էդիսոնի օրինակը սովորողների մեջ բացի աշխատասիրությունից
կձևավորի անընդհատ կատարելագործվելու ձգտում, կսովորեցնի երբեք տեղում
չդուլի, և աշխատած գումարը նպատակին օգտագործել:

Ալբերտ Էյնշտեյն



Գիտության մեջ նրա մեծագույն նվաճումը հարաբերականության տեսությունն է,
որն արմատապես փոխել է մարդու պատկերացումները տարածության,
ժամանակի և մատերիայի մասին:
Չնայած, որ Էյնշտեյնի տեսությանը շատ քիչ գիտնականներ հավատացին (նրանց
թվում էր Մարիա Կյուրին), սակայն նա մնաց իր տեսությանը հավատարիմ:

Գալիլեյո Գալիլեյ



Երբ Գալիլեյո Գալիլեյը ի պաշտպանություն կոպեռնիկոսյան արեգակնակենտրոն
համակարգի ուսմունքի գրեց «Երկխոսությունն աշխարհի երկու գլխավոր

համակարգերի մասին» աշխատությունը, նրան կանգնեցրին դատարանի առջև: Նա ընտրեց ազատ արքայի տարբերակը: Պատմում են, որ նա դատարանից դուրս գալիս ասել է. «Այնուամենայնիվ, այն (Երկիրը) պտտվում է: Էյնշտեյնի ու Գալիլեյի օրինակը սովորեցնում է մնալ սեփական համոզմունքներին ու տեսակետին հավատարիմ՝ անկախ շրջապատի կարծիքից:

Նիլս Բոր



Դանիացի ֆիզիկոս Նիլս Բորը մեծ ավանդ ունի նաև ատոմային միջուկի և միջուկային ռեակցիաների տեսության մեջ: Նա, մասնավորապես, զարգացրել է ատոմային միջուկների բաժանման տեսությունը: Նիլս Բորը հայտնի է նաև որպես խաղաղության, ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման աննկուն մարտիկ: Պատերազմի ժամանակ Բորը հրաժարվեց մասնակցել ատոմային ռումբի ստեղծմանը, և նրան փախցնելով՝ մի կերպ փրկեցին ֆաշիստական հաշվեհարդարից: Յետագայում նույնպես բոլոր երկրների կառավարություններին նա միշտ կոչ էր անում արգելել միջուկային զենքը: Նիլս Բորի օրինակով, սովորողները պետք է դառնան էլ ավելի խաղաղասեր:

Վիլհելմ Ռենտգեն



Գերմանացի ֆիզիկոս Վիլհելմ Ռենտգենը հայտնագործել է ռենգենյան ճառագայթները, որոնք լայնորեն կիրառվում են գիտության, տեխնիկայի և բժշկության մեջ: Ռենտգենյան ճառագայթներն օգտագործվում են ախտորոշման համար և երբ Ռենտգենին հարկավոր էր անցնել ռենտգեն հետազոտություն, նա երկու շաբաթ դրա համար սպասեց իր հերթին: Սովորողները այս օրինակով պետք է ջանան դառնալ համեստ և չչարաշահեն իրենց դիրքը:

Ամփոփելով բերված օրինակներում ձևավորվող արժեքները, պետք է նշել, որ այս ամենի հիմքում ընկած է մարդասիրությունն ու հայրենասիրությունը: Մեր նշած գիտնականներն աշխատել և արարել են ի բարոություն մարկանց և հայրենիքի:

Եզրակացություն

Մեծագույն գիտնականների օրինակով հնարավոր է սովորողների մեջ ձևավորել մարդկային բարձր որակներ՝ աշխատասիրություն, նպատակասլացություն, համառություն, ազնվություն, մարդասիրություն և հայրենասիրություն:

Այս աշխատանքի արդյունքում սովորողները հետագայում իրենք այլ հայտնի մարդկանց կենսագրությունն ուսումնասիրելիս կկարողանան ինքնուրույն վերլուծություն անել և ընդօրինակել նրանց մարդկային բարձր արժեքները:

Օրագրի թվանոթը

<http://ijevanlib.yzu.am/wp-content/uploads/2017/12/mankavarjutyun.pdf>

<https://vsu.am/grqer/2017/aprak/paremuzyaninna.pdf>

<http://gspi.am/media/journal/2014n1b/20.pdf>